ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Պ. ՎԻՐԳԻԼԵԱՑ ՄԱՐՈՎՆԻ

ԱՆԴԷՈՐԴԱԿԱՆ Դ.

Պոլիոն։

ԿԱՃԱՌՔ բանասիրաց 'ի բազմադիմի կարծիս հատեալք են զմանկանէն, որ վասն յօրինեալ է քերթուածս. ոմանք համարին զսա Պրուսոս գոլ որդի Հոկտաւիանու 'ի Աւինիայ. յորվանգոյնք դարձեալ հաստատեն եթէ քերթողն նախագուշակ հանդերձելոց՝ կանխաձայնէ զծնունդ մանկանն Մարկելլոսի որդւոյ Մ. Անտոնիոսի և Հոկտաւիայ քեռ Հոկտաւիանոսի Աւգոստոսի, զորոյ զծնունդ 'ի գրաւականս համարեալ աստ քերթողին խաղաղութեանն վերանորոգելոց զկնի գրգռութեանց երկոցուն իշխանացդ, յորում հաշտարար և իրաւախոհ եկաց հիւպատոսն Պոլլիոն, ապա զվաղամեռիկ զօրհաս մահուն ողբաց 'ի Զն Նիականին։ Խազումք դարձեալ նորին իսկ Պոլլիոնի համարին զմանուկն, յորոյ 'ի ծննդեանն զերծաւ Հռովմ յերեսաց սովուն որ զօրացեալն էր 'ի զչարելոյ կրսերոյն Պոմպէի։ Այլ որ զինչ և իցէ՝ 'ի սիբիլլայցն աւանդից առեալ կարծի բովանդակ իսկ բանն, և քերթողական ևեթ զարդուք պաճուճեալ. և զոր նոքա զՔրիստոսէ նախագուշակեցին, Արդիլեայն Ճարտարութիւն 'ի ծընունդ մանկանն առեալ եհան զբանն. այսոցիկ կարծեացս երաշխաւորէ մեզ և քաջ վարդապետն Սակտանտիոս։

1 Մուզայք սիկուլեանք՝ և զվեհից գոյզն ինչ երգեսցուք.
Հաճոյական չեն բնաւից խոնարհ մշայք և թաւաթուփք.
Թող նուագեմք զանտառս՝ արժան անտառքն իցեն Հիւպատին։
Երգոյցն Կումէայ[2] եհաս վերջինըն[3] ժամանակ,
5 Միւսանգամ մեծ շրջան ծնանի դարուց ընդ տիեզերս.
Եհա Կոյսն[4] առնու դարձ, դարձ զբրուանեան[5] և պետութիւն,
Եւ զարմ նորահրաշ արդ առաքի յերկնից բարձանց։
Իսկ դու ըզդաստրդ Սուսուհի[6] կալ նորածին մանկանըն խնամ,
Որ որով հապճեպ աւարտ լինեալ դարուցըն երկաթի,
10 Ի համայն աշխարհ ծագեսցէ ոսկեղինիկ ազգի սերունդ.
Արդ[7] ահա Պոլլիոն զարքայութեան առնու մական։
Եւ քեզ իսկ ո՛ Պոլլիոն, և նոյն 'ի քումդ 'ի հիւպատոջ
Իսկսցին դարուս պարծանք, և մեծամեծք[8] գնասցեն ամիսք։
Ընդ քոյովդ հովանեաւ՝ ցարդ հետք թէ մնան մեր եղերանց[9]
15 Ջնջեսցին, լուծցի երկիր 'ի յարհաւրացն յաւէրժական։
Եւ աստուածոց կեանս ընկալցի, և դից 'ի պարս ըզգիւցազունս
Տեսցէ խառն ակումբ առեալ, ինքն իսկ տեսցի 'ի նոցանէ.
Եւ զանդոյրըն վարեսցէ զաշխարհ կրօնիւքըն հայրենի։
Իսկ քեզ մանուկ նորածին՝ զիւր ըզխայրիկսըն մատուսցէ
20 Ընդաստան անարօր, տարածելով շուրջանակի
Ըզբաղեղունս պատաղիձն և զմատուտակըն[10] քաղցրարմատ,
Եւ ըզբակլայն եգիպտական զուարթափթիթ ընդ ականթի։

Եւ այծք ինքնին զուռուցիկ զբստինս 'ի տուն բերցեն կաթամբ .
Մեհիք ոչ ևս առիւծք ահացուսցեն ըզհօտ խաշանց ։
25 Եւ օրոցքդ իսկ քոյին զքև սփռեսցեն ազնիւ ծաղկունս .
Մեռցի օձ , և նենգաւոր [11] բոյս թունաբեր մեռցի անդէն .
Եւ համեմն [12] ասորնեայն ամենուրեք ընձիւղեսցի ։
Այլ իբրև զդիւցազանց փառս և ըզպարծանս քո ծընողին
Բեզ հասցէ ընթեռնուլ , զինչ արութեանց գիտել հանդէս ,
30 Տակաւ 'ի քիստրս քնքուշ խարտեշասցին արտորայք ,
Եւ յանխընամ 'ի մորմոց կախին ողկոյզքըն կարմրախայծ ,
Եւ ըզմեղրը քրքտնեսցին ցօղատարափ կարծրը կաղնիք ։
Այլ սակայն և ճնասցեն դոյզն հետք նախկին մեղանաց ,
Որ 'ի Տեթիս [13] նաւս խառնել , և պարբսպօք պատել զքաղաքս
35 Ուսուսցեն , և զերկիր 'ի լայն ակօսրս պատառել ։
Յարիցէ և նոր Տիւփոն [14] , նոր ոմն Արգոս ըզդիւցազանց
Ծցէ զընտիրս , և միւսանգամ դուոյթըս տացեն ճակատք խազմից ,
Եւ կըրկին ընդդէմ Տրոյայ զոռասցէ մեծն այն Աքիլլէս ։
Այլ յորժամ յարբունս հասեալ արանց յակումբ դու խառնեսցիս ,
40 Տեղի տացէ ծովաչուն , և նաւականն ոչ ևս շոճի
Շրջեսցի խորս յանդնդոց 'ի տուրևառրս [15] վաճառուց .
Օ՛ի համայն ինքն երկիր բերցէ ըզպէտրս համայնից ։
Ել ժուժայ երկիր փոցղից , ոչ հանդուրժէ որթ յատոցի .
Եւ հուժկուն հողավաստակ լուծցէ զեզինս իւր 'ի լծոյ ։
45 Եւ ոչ գեղմին կրթեսցի ստել 'ի մոյնրս յերփներանգս .
Օ՛ի ինքնին մերթ խոյն յարօտ 'ի ծիրանի բոսորագեղ
Ողուաթոյր , մերթ 'ի դեղձան ներկանիցէ զգեղմն 'ի քրքում ,
Եւ արիւն աղբերայ [16] պճնէ զգառինս ճարակաւորս ։
Պարկայք միախորհուրդ՝ ըստ Հրամանաց անխախտ կարգին ,
50 Կոց իւրեանց ձայն ետուն , Ընթացարուք դարք այդպիսիք ։
Հապա քեզ ժամ է մատչել յիշխանական փառացն 'ի բարձ ,
Սիրասուն դից ծընունդ , վեհ սանականդ Աբրամազդայ .
Տես զի աշխարհ ծանու բեռամբըն գոգ առեալ տատանի ,
Տատանին և ցամաք ծովուն սահմանք ուերկինք բարձունք .
55 Տես զի ընդ դարն հանդերձեալ զուարթանան բնութիւնք համայն ։
Ո՛հ մատն ինչ յետին թէ մայր իմոց երկար կենաց ,
Եւ շունչ բաւական զարիութիւնս քո տարփողել ,
Ել յայնժամ յաղթեր ինձ բնաւ երգովք իւրովք Ովրակեանն Որփևս ,
Եւ ոչ Լինոս , թէ մայր նրմին և սրմա կայր հայրն օժընդակ .
60 Որիէի Նալլիոպէ , և Լինոսի շէկն Պոլլոն .
Ինքն իսկ Պան թէ յատենի Արկադիոյ ընդ իս մրցեր ,
Ինքն իսկ Պան Յ Արկադիայ խոստովաներ ըզպարտութիւն ։
Հապա ուսիր մանկիկ չքնաղ 'ի ժպիտ ըզմայրըդ ճանաչել ,
Ըզմայրն , ում տատնեքին [17] երկայն ամիսք ածին տագնապ .
65 Հապա ուսիր մանկիկ չքնաղ . զի ում ծընողք ոչ ժրմտեցան ,
Ել աստուծոյն ճաշակից ոչ դիցուհւոյն մուտ յառագաստ [18] ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 Սիւ-ղէոն, զՍիկիլիացի Մուզայս կոչէ օ-ժանդակ, զի Թէոկրիտոս իշխան հովուերգակ քերթողաց 'ի Սիկիլիոյ էր 'ի քաղաքէն Սիրակուսայ։

2 Երէոյնն Կո-մէայ, այս է սիբիլլայց կանխագուշակութեան. զկումէականդ որիշ ասեն լինել որ 'ի Կումանայ, զմին յԻտալիա և զմիւսն յԵոլիս։

3 Վէրջինն, այլք իմանան առաջին զի և յերկոսին իսկ միտս հարկանէ լս. Ultima. այլ հաւանագոյն թուի մերս, զի և սիբիլլայք վերջին գրեցին զսա յետ ոսկի, արծաթի, պղնձի և երկաթի դարուց. այլ մարթ է և առաջին իմանալ զի 'ի նմանէ սկիզբն գնէ երջանկութեան դարուն հանդերձելոյ։

4 Կոյսն, այն ինքն է Աստրէա կամ Արդարութիւն, դուստր Արամազդայ 'ի Թեմիդեայ, որ յառաջն բնակակից գոլով մարդկութեանս, ապա վասն եղեռնագործ անիրաւութեանց սոցա՝ ելիք զաշխարհս և վերհամբարձաւ յերկինս։

5 Զբուանէան պէպուրիան, որ և սատուռնական՝ ասի ժամանակ ոսկի դարուն, յորում մարդիկ անփորձք և անմերձք 'ի չարեաց 'ի հովուական կենցաղոյն վայելէին 'ի քաղցրութիւն։

6 Լուսուհի, զլս. անուանդ Lucina որ է ածանց lux բառին որ է մերս լոյս, համարձակեցաք քերթողական ազատութեամբ յեղուլ 'ի Լուսուհի. նախ զի արմատ բառիս նոյն է որպէս տեսաք 'ի մերս և 'ի նոցա, և իմաստ նոյն որ է լուսատու. և երկրորդ անգամ զի և առ նախնիս գտանիմք Օգուհի կամ Օգոյի փոխան Հերայ ասացեալ, որ է դիցուհի օգոց և այերաց։ Արդ Լուսուհի կամ Լուկինա ասուածուհի համարեալ է Ծննդոց. իբր լուսատու և դայեակ խնամատար մատաղ մանկութեան. զսա համարին ոմանք լինել Հերա և այլք Անահիտ, ընդ որս և Վիրգիլ որպէս յայտ է 'ի մետասանեբորդ տողէն։

7 Քոյր Ապոլլոն, զի եղբայր համարէր Անահտայ. բազումք Ապոլլոնիւ զՀոկտաւիանոս կարծեն այլաբանեալ և Լուգինեաւ զՀոկտաւիա ըզքոյր նորա։

8 Մեծամեծ փնասչն ամպ, զՀինգերորդէն և զվեցերորդէն ասացեալ է, որ զՅուլիոսի և զԱգոստոսի կայսերաց զանուանս առեալ կոչեցան Յուլիս և Աւգոստոս։

9 Մէր եղէրանց, կամ զարովացուց երգմնահարութիւնէն է բանդ, զոր և հռոմայեցւոց համարի, նախահաւ սոցա գոլով տրովացւոց, որպէս և 'ի Մշ. Ա. 516։

. . . շատ իսկ արդ լուծաք յարեան մեր Ճապաղիս
Ըզվերէժ խարդաւանաց Լաւմեդոնեանցն Տրովագայ։

և կամ զքաղաքական մարտէն և զդրգռութենէն Կեսարու և Պոմպէի։

10 Մոգուպոլդ եգեալ է ընդ լս. Baccar, բոյս քաղցրամատ և անուշահոտ, 'ի պէտս եկեալ խոտարաց և հմայից. զսա համարին լինել digitalis, որ և 'ի դէպ գայ հյկ. 'ի digitus որ է մատն. զայն զայս բոյս խոտոյ ընծայէ չքնաղ մանկանն 'ի զգուշութիւն յակնհարէ և 'ի գար հայելոյ. որպէս և 'ի Է անդ. 27։

11 Նէնգաւոր, ասէ զբոյսս թունաբերս զի մահ յանզգաստից նիւթեն ուտելեացն։

12 Համէն, նոցին ձայնիւ վարեալ և 'ի յն. և 'ի լտ. և յարդի լեզուաց. ծառ է փոքրիկ և սակաւատերեան, սպիտակ ծաղկօք և ողկուզաձև մանր պտղովք, և սերմն նորա անուշահոտ, յաշխարհս Սաորիս՝ յորմէ և զմակգիրդ առեալ է քերթողն. գտանի և յաշխարհիս մերում, որպէս և 'ի Պոնտոս և 'ի Մարատան։

13 Տէրիս, հարսն դից Ոկկիանու կամ Պոսիդոնի և մայր ծովային նհանգացն յաւերժահարսանց. ասա փոխան ծովու առեալ է։

14 Տի-ֆոն, զեկավար արգոնաւուն, որ ասա Արգոս վերակոչի յանուն շինողին կամ 'ի նաւորդացն արգիացւոց, և կամ յերագասլաց ընթացեցն. զի 'ի յն. լեզու ἀργὺς արդիս 'ի մերս արագ լսի։ Իսկ ընտիր գիւցազունքն են նոքին իսկ արգոնաւորդք որք Յասոնի առաջնորդելովն հասին 'ի Կոլքիս յափշտակութիւն ոսկի գեղմանն։

15 Քանզի զգիւտ դրամոց կանխեցին տուրևառիկ կամ փոխանակաւ ևեթ շահավաճառութիւնք։

16 Զլտ. բառ քերթողիս Sandix որ է նօթ գեղ կարմիր 'ի կապարէ այրելոյ, բազումք իմանան լինել և բոյս ծիրանեգոյն, վասն որոյ և մեք համարձակեցաք փոխել յաղբերաց արիւն, զբուսոց և զգալարեաց գոլով բանս ասատնօր. արդ է սա "Ըստ հայաստանեայց ծաղիկ կարմիր՝ բարդ, նուազ հոտով և գիւրաթառամ, մերձ յակունս աղբերաց լերանց,, . Հյկզ. Բռ. և թերևս 'ի Ճահ իսկ եկեալ բանի քերթողիս՝ որ ասէ թէ 'ի Ճարակել գառանց 'ի գալար վայրի ինքնին ներկանիցի գեղմն նոցին 'ի ծիրանի և 'ի գեղին քրքմացան կամ խարտեաշ։ Այլ գիտել արժան է զի այլ է աղբրացն կամ վիշապին արիւն, որ է խէժ կարմիր հնդկային ծառոյ 'ի լտ. Sanguis draconis, և 'ի տՃ. Գաբրաչգանը։

17 Կամ զի լուսնական ամսովք չափէ զաւուրս, կամ զի յետ ինն ամսոց 'ի տասներորդումն բանի արգանդ, որպէս համարի և սուրբն Աւգոստինոս։

18 Բազումք բազումս ասացին զայսմանէ. այլ հաւանական է զՀեփեստեայ համարել. քանզի տխեղծ և անկերպարան ծնեալ որդի Արամազդայ և Հերայ՝ 'ի ծնողաց անկաւ յերկնից 'ի յերկիր 'ի Լիմնոս, յորմէ և ոտք նորա կաղացան. այսու ոչ միայն 'ի սեղանոյ դիցն չվայելեաց, այլ և 'ի կամեն հարսնածել զԱթենաս՝ գարովեալ արհամարհեցաւ 'ի նմանէ։

էջ	տող	սխալ	ուղիղ
3	12	խազազ-ութիւն	խազազ-ութեան